ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ ԵՒ ՊՈԼՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ (1780-1820ԱԿԱՆՆԵՐ)

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ
armanmaloyan@mail.ru
armanmaloyan1976@gmail.com

ԺԸ. դարի երկրորդ կէսին արեւմտահայութեան տոկոսային յարաբերութեամբ փոքրամասնութիւնն ապրում էր քաղաքներում եւ քաղաքատիպ բնակավայրերում: Առեւտրաարհեստագործական կենտրոններում բնակուող արեւմտահայութեան հիմնական զբաղմունքը առեւտուրն ու արհեստագործութիւնն էր: Քաղաքները ոչ միայն կենտրոնական իշխանութեան յենարաններ եւ յաւելեալ արտադրանքի իրացման շուկաներ էին, այլեւ նախադրեալներ էին ստեղծում հասարակական արտադրութեան զարգացման համար: Քաղաքները բաղկացած էին ինքնուրոյն միաւորներից՝ թաղամասերից (*մահալլէ*), որոնք ապրում էին մեկուսի կեանքով եւ իրարից տարբերւում էին մասնագիտական, մասամբ նաեւ էթնօդաւանական նախանշաններով: Քաղաքը պետութեան կողմից դիտւում էր ոչ թէ սոցիալ-տնտեսական կառոյց, այլ որպէս որոշակի քաղաքական ուժ՝ սուլթանական իշխանութեան ամրապնդման, երկրի ներքաղաքական դրութիւնը կայունացնող, կենտրոնի եւ ծայրագաւառների միջեւ կապն ամրապնդող գործօն: Նկատի ունենալով քաղաքների կարեւոր նշանակութիւնը պետութեան կառոյցուում՝ կայսրութեան պաշտօնեաները ձգտում էին քաղաքների համար առաւելագոյն բարենպաստ պայմաններ ապահովել, աշխատում էին քաղաքաբնակների կեանքի պայմանների կայունացման եւ բարելաւման համար: Քաղաքների աճին նպաստող պայմաններից էր պարենի եւ հումքի մատակարարման վրայ պետական հսկողութեան իրականացումը: Փոխադրամիջոցների թոյլ զարգացուածութիւնը եւ ճանապարհների անվտանգութեան բացակայութիւնը մեծ դժուարութիւններ էին ստեղծում քաղաքները պարենով եւ արհեստագործական հումքով մատակարարելու գործում: Այս պայմաններում Օսմանեան Կայսրութեան պաշտօնեաները մի

շարք արտադրատեսակների, պարենամթերքի եւ հումքի գների կարգաւորման քաղաքականութիւն էին վարում: Սկսած ԺԶ. դարի կէսերից՝ Բ. Դուռն աւելի յաճախ էր արգելում երկրից որոշ տեսակի հումքի եւ պարենի արտահանումը[1]: Քաղաքաբնակների կենսապայմանները որոշող մի շարք գործօններ նկատի առնելով՝ կարելի է ենթադրել, որ քաղաքաբնակների (*շեհիրլու, շեհիրլի*) նիւթական գոյավիճակն աւելի բարձր, իսկ շահագործումն աւելի քիչ էր, քան գիւղացիութեանը: Այս հանգամանքն էլ կանխորոշում էր գիւղաբնակների մշտական ներհոսքը քաղաք: Պատահական չէր, որ քաղաքներում արագօրէն աճում էր յատկապէս արհեստաւորների թիւը, որոնք բաւարարում էին տիրապետող դասի պահանջմունքները: Քաղաքներում արհեստագործութեան զարգացման բարենպաստ պայմանները նպաստում էին առանձին թաղամասերի եւ քաղաքների մասնագիտացմանը որոշակի արտադրատեսակների մէջ: Այսպէս, դեռեւս Էլիա Չելեբին հաղորդում էր, որ Էրզրումն ու Դիարբեքիրը հռչակուած էին իրենց զինագործներով եւ ոսկերիչներով, իսկ Թոքատի եւ Ամասիայի ներկուած գործուածքները յայտնի էին նոյնիսկ Ֆրանսիայում: Տրապիզոնից արտահանում էին մեղրամոմ եւ մոմ, Սամսունից՝ կանեփաթել եւ ճոպան, Մալաթիայի բնակիչները մասնագիտացել էին սպիտակ բամբակեայ գործուածքեղէնի արտադրութեան, Մարզուանի բնակիչները՝ երկնագոյն, իսկ Էդիրնէի եւ Իզմիրի բնակիչները՝ կարմիր բամբակեայ գործուածքեղէնի արտադրութեան գործում, Բուրսան յայտնի էր իր մետաքսով, Ուշակը՝ գորգերով, Խարբերդը՝ թաղիքով: Տարբեր քաղաքներ էին արտահանում Կեսարիայի դեղին, Դիարբեքիրի երկնագոյն, Կաստամոնուի կարմիր սաֆիանը (սեկ, այծակաշի), բազմագոյն կաշիներ պատրաստում էին Էդիրնէում եւ Բիթլիսում[2]:

Արհեստագործութեան զարգացմանը նպաստում էր եւ այն, որ կառավարութիւնը խոշոր քաղաքներին տրամադրում էր հարկային մեծ արտօնութիւններ: Մ. Մէյերը, ելնելով եւրոպացի ճանապարհորդների տեղեկութիւններից, գրում է, որ խոշոր քաղաքների բնակչութիւնը փոքր-ինչ աւելի արագ էր աճում ԺԸ. դարում (տարեկան 0,5-0,7%), թէեւ ցուցանիշները զգալիօրէն զիջում էին ԺԶ. դարի ցուցանիշներին[3]:

Քաղաքների բնակչութեան թուի արագ աճին նպաստում էր նաեւ տուեալ քաղաքի՝ առեւտրական ուղիներին մօտ լինելը:

Միաժամանակ քաղաքներում արագօրէն ընթանում էր ունեցուածքային շերտաւորման գործընթացը: Արհեստագործութեան զարգացման մէջ մեծ էր էսնաֆութիւնների խաղացած դերը. էսնաֆութիւնները կանոնակարգում էին արտադրութիւնը, հաստատում էին աշխատանքի որոշակի մեթոդներ, խիստ սահմանափակում էին արտադրատեսակի քանակը եւ որակի համար ներկայացնում էին մի շարք պարտադիր պայմաններ: Նոյնպիսի խստութեամբ կարգաւորւում էր նաեւ ապրանքի իրացումը: Իւրաքանչիւր էսնաֆութիւն ունէր իր իրացման գօտին, որտեղ միայն ինքը կարող էր վաճառել իր արտադրանքը. ոչ ոք իրաւունք ունէր բարձրացնել արտադրանքի վրայ հաստատագրուած գները[4]: Էսնաֆութիւնները մեծ դեր էին խաղում նաեւ քաղաքների կառավարման գործում: Սակայն ԺԸ. դարի ընթացքում էսնաֆութիւններն աստիճանաբար կորցրեցին իրենց կազմակերպչաարտադրողական գործառոյթների մեծ մասը եւ վերածուեցին ֆինանսավարչական բնոյթի միաւորների:

Աստիճանաբար վաճառականական դրամագլուխը ներթափանցում էր արհեստագործական արտադրութիւն: Անմիջական արտադրողների՝ վաճառականական դրամագլուխին ենթարկուելու աւելի տարածուած եւ պարզ ձեւը նրանց արտադրանքի գնումն էր: Անբաւարար զարգացած շուկայի պայմաններում, երբ արտադրանքի մեծ մասը վաճառւում էր ամէնամեայ խոշոր տօնավաճառներում, աղքատ արհեստաւորները ստիպուած էին իրենց արտադրանքը տալ վաճառականներին, կամ էլ իրենց ունեւոր վարպետներին: Վաճառականական դրամագլուխի՝ արտադրութեան մէջ ներթափանցման միւս ուղին կանխավճարով հումք ու ապրանք ձեռք բերելն էր: Սակայն մինչեւ ԺԸ. դարի վերջը ձեռնարկատիրութիւնը արհեստագործութեան բնագաւառում լայնօրէն տարածուած չէր: Էսնաֆութիւնների աւագները, կուտակելով զգալի հարստութիւն, ձգտում էին դառնալ խոշոր առեւտրականներ, բայց ոչ՝ արդիւնաբերողներ:

Օսմանեան Կայսրութեան մէջ հպատակների կեանքի եւ ունեցուածքի անապահովութիւնը սահմանափակում էր տեղական վաճառականութեան նախաձեռնութիւնը՝ նրանց գործունէութեան մղելով դէպի միջնորդ առեւտրի եւ վաշխառութեան բնագաւառները, որի արդիւնքը եղաւ տնտեսական կեանքի

լճացումը, եւ աշխատաւորական զանգուածների դրութեան վատթարացումը ինչպէս քաղաքում, այնպէս էլ գիւղում:

Թէեւ ԺԷ. դարի վերջին եւ ԺԸ. դարի առաջին կէսին կայսրութեան մէջ ի յայտ էին եկել խոշոր ձեռնարկութիւններ, սակայն դրանք դեռեւս հեռու էին դրամշատիրական ձեւի մանուֆակտուրաներ լինելուց եւ ընդամէնը աւատատիրական դարաշրջանի արքունական գործարաններ էին: Այդպիսի պայմաններում բաւականին դանդաղ էին ընթանում քաղաքների ընդլայնման եւ զարգացման գործընթացները:

Քաղաքային ազգաբնակչութեան թիւը ԺԸ. դարի վերջին քառորդին աճման բաւականին ցածր ցուցանիշ ունէր: Արեւմտեան Հայաստանի քաղաքների մեծ մասում, անբարենպաստ զանազան պայմանների հետեւանքով, հայերը կազմում էին բնակչութեան փոքրամասնութիւնը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԺԸ. դարի երկրորդ կէսին արեւմտահայ քաղաքային բնակչութեան հոծ զանգուած էր կենտրոնացած Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաք Կ.Պոլսում, որը իւրօրինակ ներկապնակ էր: Արեւմտահայ գաւառներից եկած իւրաքանչիւր զանգուած իր հետ բերելով սեփական երանգը, ամբողջացնում էր այդ ներկապնակը: Նշուած ժամանակաշրջանում Կ.Պոլիսը արեւմտահայութեան հասարակական-քաղաքական կեանքի գլխաւոր կենտրոնն էր, սակայն ԺԸ. դարի երկրորդ կէսի հայ Պոլիսը համեմատաբար քիչ է ուսումնասիրուած: Պոլսահայ գաղութի կենսունակութիւնն ու աշխուժութիւնը մեծապէս պայմանաւորուած էր արեւմտահայ գաւառներից դէպի Կ.Պոլիս տեղի ունեցող անընդհատ ներհոսքով, ինչի շնորհիւ էլ այն պահպանում էր արեւմտահայութեան քաղաքական, հոգեւոր ու կրթամշակութային կենտրոնի իր դերը:

ԺԸ. դարի վերջին քառորդի ֆրանսիացի հեղինակ Գիյոմ-Անտուան Օլիւիէն ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Կ.Պոլսի մասին. «*Կ.Պոլիսը թուրքերի, յոյների, հայերի, հրեաների, եւրոպացիների մի խառնուրդ է, որտեղից էլ բխում է բարքերի, կրօնների եւ լեզուների բազմազանութիւնը: Թուրքերն այստեղ աւելի շատ են, քան միւսները եւ տարածուած են ամբողջ քաղաքում եւ նրա արուարձաններում: Յոյները կազմում են բնակչութեան*

1/6ը. նրանք մի թաղամաս ունեն՝ փեղադրուած նաւահանգստի դիմաց եւ յայտնի է յունական Ֆանարակի կամ Ֆանալ անունով: Մի մեծ զանգուած էլ ապրում է Բերայում եւ Գալաթայում [Ղալաթիա] եւ ապրում են ֆրանկների[5] մէջ: Հայերը մի քիչ են պակաս, քան յոյները. նրանք ապրում են քաղաքի ներսում եւ արուարձաններում: Բայց հարուստների մեծամասնութիւնը որոշ ժամանակից ի վեր եկել է բնակուելու Բերայում եւ հաստատուել է ֆրանկների միջավայրում՝ առանց, սակայն, ձուլուելու նրանց հետ: Հրեաներն ամենաքիչն են, ապրում են քաղաքի ներսում, որոշ թուով հրեաներ հաստատուել են Բերայում եւ Գալաթայում եւ միջնորդ են վաճառականների մօտ: Դեսպանները եւ Բ.Դռան մօտ գտնուող օտարերկրեայ իշխանութիւնների գործակալները եւ այն եւրոպացիները, ում առեւտուրը Կ.Պոլիս է ձգել, կազմում են 2000ից աւելի»[6]:

Չափազանց ուշագրաւ է նաեւ հայերի բնաւորութեան եւ բարքերի նկարագրութիւնը. այդ մասին Օլիւիէն գրում է. «*հայերը վաճառական են, նրանք են, որ կատարում են Օսմանեան Կայսրութեան մէջ ամենամեծ առեւտուրը եւ դա անում են խելամտօրէն: Նրանք համբերատար են, խնայող եւ անխոնջ: Նրանք ճանապարհորդում են Ասիայում եւ Հնդկաստանում, ունեն խանութներ եւ գործակիցներ ամէնուրեք: Մեծամասնութիւնը զբաղւում է արհեստագործութեամբ, սեղանաւորներ են, մատակարարներ եւ փաշաների գործակալներ: Նրանց մեղադրում են, որ ոչ մի միջոց չեն խնայում հարստանալու համար եւ խաբում են ապրանքի որակի մէջ, երբ կարողանում են: Հազուադէպ են խոստմնազանց լինում, ճշտապահ են իրենց խոստումները կատարելիս: Խստակեաց են, իրենց հաւատի պատուիրաններին ճշգրիտ հետեւող, թերուս են եւ սնահաւատ. նրանց պակասում է միայն կրթութիւնը եւ մի կառավարութիւն, որը լինի աւելի արդարադատ եւ պակաս ճնշող, քան թուրքերի կառավարութիւնն է, որպէսզի դառնան անսահմանօրէն յարգուած մի ազգ*»[7]:

Յայտնի է, որ Օսմանեան Կայսրութեան տնտեսական կեանքում անուրանալի էր թուրքահպատակ քրիստոնեաների՝ հայերի, յոյների, բուլղարացիների, սերբերի խաղացած դերը: Խօսելով Պոլսոյ արհեստագործական արտադրութեան մասին՝ Անտոն Հաջեանը եւ Մանուէլ Զուլալեանը նշել են, որ «մայրաքաղաքի արհեստագործական արտադրութեան եւ առեւտրի զարգացման

գործում զգալի դեր են խաղացել քրիստոնեայ ժողովուրդները»[8]: Զուլալեանը նաեւ նշում է, որ արհեստագործական արտադրութեան ամենախոշոր կենտրոնը Օսմանեան Թուրքիայում ԺԵ.-ԺԷ. դարերում Պոլիսն էր, ուր արհեստաւորների զգալի մասը հայեր ու յոյներ էին[9], ապա մէկ այլ տեղ գրում է, որ ԺԵ.-ԺԸ. դարերում Օսմանեան Կայսրութեան ներքին եւ արտաքին առեւտրի ասպարէզում հայ առեւտրականները ունեցան զգալի յաջողութիւններ[10]: Դա բացատրւում էր նաեւ նրանով, որ իշխող մահմեդական տարրը, օգտուելով տիրողի իր իրաւունքներից, տարուած լինելով շարունակական ասպատակութիւններով, թալանով, գերեվարութեամբ ու աւարառութեամբ եւ սովոր լինելով անաշխատ եկամուտով գոյատեւելուն, արհամարհում էր արտադրողական գործընթացը կամ, աշխատանքի փորձ չունենալով, դեռեւս հմուտ ու ընդունակ չէր դրան: Ասպարէզը մնում էր *ռայայ*ին՝ քաղաքականապէս իրաւազուրկ, սակայն ստեղծագործ աշխատանքի դարաւոր փորձ ունեցող, աշխատասէր, ժրաջան ու շինարար, գործիմաց, լեզուներին հմուտ կամ արագօրէն հմտացող քրիստոնեայ ժողովուրդներին[11]: Անգլիացի հեղինակ Պոլ Ռիկօն գրում է, որ «*թուրքերն արհամարհում են արուեստները, գիտութիւնը եւ նոյնիսկ առեւտուրը. նրանց մօտ յարգի է միմիայն զինուորական պետութիւնը*»[12]:

Վաճառականութիւնը, որ քաղաքակրթութեան զարգացման առաջին խոշոր փուլն էր, որ ապրանքափոխանակութեան հետ առաջ է բերում ժողովուրդների միջեւ նաեւ մտքերի փոխանակութիւն ու շփում, «միշտ մի տեսակ խորթ ու օտար զբաղմունք մնաց թիւրք իշխող ցեղի համար»[13]: Օլիւիէն նշում է, որ «թուրքերը չեն սիրում նուիրուել հողագործութեանը: Իրենց նախնիների պէս նրանք գերադասում են զէնքի արկածաւոր արհեստը, աւազակութիւնն ու շահախարդախութիւնը[14]: Ամբողջ Օսմանեան Կայսրութեան մէջ ամենալաւ հողերի մեծագոյն մասը լքուած է, եւ յոյները, հայերն ու արաբներն են, որ մասնաւորապէս նուիրւում են երկրագործութեան, երբ նրանց չափից դուրս չեն նեղում կառավարութեան գործակալները կամ թալանչի ու աւերիչ հորդաները...[15]: Վաղուց ի վեր եւրոպացիները եւ մանաւանդ ֆրանսիացիները փորձել են նրանց սովորեցնել միքանի օգտակար արհեստներ, բայց արդիւնքը չնչին է եղել, որովհետեւ ազգային

գոռոզութիւնը, տգիտութիւնն ու մոլեռանդութիւնն արգելք են լինում: Ֆրանսիացիներն են նրանց սովորեցրել նաւեր, հրացաններ ու սուիններ, օճառ պատրաստել, երկաթ մշակել»[16]:

Բնական է, որ Օսմանեան Կայսրութեան տնտեսական կեանքում հայերի խաղացած դերն ամէնեւին էլ աննկատ չի մնացել: Էլիզէ Ռեկլիւն գրում է. «*...հայերը փարբերում են թուրքերից աւելի բաց, հաղորդասէր եւ ազատ մտքով կրթուելու, աւելի մեծ սիրով, աւելի մեծ նախաձեռնութեամբ առեւտրի եւ արդիւնագործութեան մէջ*»[17]: Իսկ Իւան Գոլոբորոդկօն գրում է. «*քաղաքներում առանց հայերի չէր կարող ընթացք ունենալ տեխնիկայի, արուեստի, գիտութեան, արհեստագործութեան ոչ մի քիչ թէ շատ լուրջ ճիւղ... հայերը հանդիսանում են ամենամշակութային տարրը ասիական Թուրքիայում*»[18]: Որ, իրօք, Օսմանեան Կայսրութիւնում առեւտուրը կատարում էին ամէնեւին էլ ոչ թուրքերը, հաստատւում է նաեւ Ֆրիդրիխ Էնգելսի կողմից. «Ո՞վ է առեւտուր անում Թուրքիայում, յամենայնդէպս ո՛չ թուրքերը...: Ծովային խոշոր նաւահանգիստներում հիմնաւորուած յոյները, հայերը, սլաւոնները եւ արեւմտաեւրոպացիներն իրենց ձեռքում են պահում ամբողջ առեւտուրը... Հեռացրէք Եւրոպայից բոլոր թուրքերին, առեւտուրը դրանից բնաւ չի տուժի»[19]: Վաստակաշատ հայագէտ հայր Ղուկաս Ինճիճեանը բերում է ԺԷ. դարի ֆրանսիացի հեղինակ Պիէր Մարտին Մարտինիէի (Pierre Martin de la Martinière 1634-1690) կարծիքը, որն արձանագրել է. «*Հայք կարի իմն անձնատուր են վաճառականութեան եւ ամենայն մտադրութեամբ պարապին ի նմա որում՝ են ընդունակ, սոքա են արուեստապէտք ոչ միայն վաճառականութեան Արեւելից, այլ նաեւ ձեռնտուք մեծապէս վաճառականութեան առաւել մեծամեծ քաղաքացն Եւրոպիոյ: Տեսանեմք զսոսա գալ ի խորոց Պարսկաստանեայց մինչ ի Լիւոնս. չեն բազում ժամանակս յորմէհետէ բնակութիւն կալան ի Մառսիլիա, գտանին ի Հոլանտա, յԱնգղիա, ի Վէնէտիկ, ճանապարհորդեն ի Մողոլ, ի Շիամ (որ է ի Հնդիկս), ի Ճեաւա, ի Փիլիպպեան (կղզիս) եւ ընդ ամենայն Արեւելս բաց ի Չինաց*»[20]: Յիրաւի, Օսմանեան Կայսրութեան քաղաքների ոչ միայն արհեստագործութեան հիմնական ճիւղերը, այլեւ ներքին եւ արտաքին առեւտրի իրականացումը միջնադարում եւ նոր ժամանակաշրջանում հիմնականում գտնւում էր թուրքահպատակ քրիստոնեաների, այդ թւում՝ հայերի ձեռքում:

Դեռեւս ԺԸ. Դարասկզբի ճանապարհորդ Ժոզէֆ Պիտոն Դը Տուրնեֆորը գրել է, որ «հայերը միմիայն իրենց առեւտրով են զբաղուած եւ նուիրւում են նրան այն բոլոր ուշադրութեամբ, որին ընդունակ են: Ոչ միայն նրանք տէր են Արեւելքի առեւտրին, այլեւ մեծ մասնակցութիւն ունեն եւրոպական ամենամեծ քաղաքների առեւտրական յարաբերութիւնների մէջ... Վերջինների (հայերի - Ա.Մ.) պարզ ու չափաւոր կեանքը, խնայողութիւնը, շիտակութիւնը, ձեռնարկելու ուժը, մեծ ճամփորդութիւններ տանելու կարողութիւնները, այդ բոլորը միանգամայն յարմար էր դարձնում հայերին առեւտուր մղելու համար... Իսկ նրանց քրիստոնեայ լինելը դիւրացնում էր նրանց յարաբերութիւնը Եւրոպայի բոլոր ազգերի հետ... նրանք դարձան երկրագնդի ամենահռչակաւոր առեւտրականները»[21]: Նրանից աւելի վաղ (1668ին) մէկ այլ ճանապարհորդ, միսիսոնէր Ժաք Վիլլէտը գրում է, որ հայ խոշոր վաճառականները մետաքսը դարձրել են իրենց առեւտրի մեծագոյն ոլորտներից մէկը: Կան, որ ամբողջ կարաւաններ են բարձում մետաքսի հակերով: Վիլլէտի վկայութեամբ՝ հայ վաճառականների մէջ կային միլիոնատէրեր[22]: Ֆրանսիացի հեղինակ, ճիզուիտ Թոմա Շարլ Ֆլէորիոն (ԺԷ. դար) նշում է, որ հայերի «*...ձեռքում է Արեւելքի ողջ առեւտուրը, եւ մեծապէս նպաստում են Եւրոպայի բազմաթիւ մեծ քաղաքների առեւտրի բարգաւաճմանը*»[23]: Իսկ 1748ի ճանապարհորդ անգլիացի Ջոն Հարիսը պնդում է. «*Հայերը առեւտրական ազգութիւն են եւ անում են ամենաընդարձակ առեւտուրը, աւելի, քան որեւէ այլ ժողովուրդ: Նրանք տարածուել են ամբողջ Արեւելքում, արտակարգ մեծ առեւտուր են վարում Ռուսաստանում եւ իրենց ազգից ներկայացուցիչներ ունեն Եւրոպայի առեւտրական խոշոր քաղաքների մեծ մասում*»[24]: Օսմանեան Կայսրութեան առեւտրական կեանքում հայերի ունեցած դերի մասին արժէքաւոր է նաեւ ԺԸ. դարի վերջին քառորդի ֆրանսիացի քաղաքական գործիչ եւ ճանապարհորդ Լուի-Ֆրանսուա Ֆերիէր-Սովբէֆի վկայութիւնը. «*Հայերը, տարածուած համարեա ամբողջ Ասիայում, բնական ձիրք ունեն առեւտրի նկատմամբ, որի շնորհիւ ընտրել են ամենածաղկուն քաղաքները, եւ շատ ընտանիքներ, անսահման կարողութիւն կուտակելով, նախընտրել են հաստատուել օտար երկրներում, որպէսզի այնտեղ վայելեն իրենց սպեղծածի պտուղները*»[25]: Աւելի ուշ, ֆրանսիացի արեւելագէտ,

ճանապարհորդ Պիէր-Ամեդէ Ժոբէրը 1805-1806ին, մանրամասն ծանօթանալով Օսմանեան Կայսրութեան եւ Իրանի հայերի կեանքին, գրում է, որ հայերը «*առեւտրի մէջ ցոյց են տալիս մեծ խելացիութիւն եւ ուղղամտութիւն: Ինչպէս յոյները եւրոպական Թուրքիայում եւ ղպտիները Եգիպտոսում, այնպէս էլ սրանք տէր են ասիական Թուրքիայի հասարակաց եկամուտներին: Նրանք գտնւում են համարեա ամբողջ ասիական ցամաքամասի վրայ մինչեւ Հնդկաստան: Նրանք իրենց հետ ամէն տեղ տանում են հնազանդութիւն եւ կարգապահութիւն, որով ձեռք են բերում վարկ ու հարստութիւն: Առ ոչինչ համարելով հոգսը, յոգնութիւնը, ստորացումն ու նախատինքը, նրանք մեծ հարստութիւն են դիզում, առանց մտածելու այն վտանգների մասին, որոնք շրջապատում են նրանց այդ երկրներում, ուր օրէնքները ուժ չունեն եւ մարդիկ անարդար են*»[26]: Այստեղ պէտք է աւելացնել, որ հայերը հաստատուել էին նաեւ Հնդկաստանում, քանզի ըստ Կարլ Ռիտտէրի՝ հայերը մտել ու հաստատուել են Դեկանի մէջ իբրեւ առեւտրականներ. նրանք շարունակական առեւտրական յարաբերութիւնների մէջ են հրեաների եւ սիրիական քրիստոնեաների հետ[27]: Ըստ Ինճիճեանի՝ Գիյոմ Թոմաս Ռայնալը (Guillaume Thomas François Raynal) հայերին համարում է «*Տէր (կամ ուսուցիչ) ներքին վաճառականութեան Ասիոյ... Ազգ աչալուրջ, հմտացեալ յարեւելեան սովորութիւնս. տէր մեծի դրամոց. ժուժկալք վերջին չափաւորութեամբ*»[28]: Իսկ Օսմանեան Կայսրութեան ներքին գործերի ներհուն դիւանագէտ մի անձնաւորութիւն, որ երկար ժամանակ պաշտօնավարել է Կ.Պոլսում եւ գաւառներում ԺԹ. դարի առաջին քառորդին, ասել է. «*Հայերն էին ու են տակաւին Թուրքիայի ամէնավաճառ եւ ամենահարուստ ժողովուրդը*»[29]:

Օսմանեան Կայսրութեան ներքին ու արտաքին առեւտրում հայերի առաջնային դիրքերը պահպանուեցին նաեւ յետագայ ժամանակաշրջանում, ինչը վկայում են նաեւ ԺԹ. դարի առաջին կէսի հեղինակները: Այսպէս, 1835ին ռուս ճանապարհորդ եւ հետազօտող Միխայիլ Պ. Վրոնչենկօն գրում է, որ Արեւմտեան եւ Կենտրոնական Փոքր Ասիայում արհեստներն ու առեւտուրը հայերի գլխաւոր զբաղմունքն են, Փոքր Ասիայի ներքին քաղաքներում ամենահարուստ վաճառականները հայեր են[30]: Իսկ դեռեւս 1829ին ֆրանսիացի ճանապարհորդ Վիկտոր Ֆոնտանիէն

(Victor Fontanier) գրում է. «*Հայերը Թուրքիայում սեղանաւորի մասնագիտութեան մենաշնորհ ունեն*»[31]: Յիրաւի, Օսմանեան Կայսրութեան գաւառներում մինչեւ ԺԹ. դարի կէսերը բանկային գործարքների մենաշնորհը գտնւում էր հայերի ձեռքին[32]:

Վերը մէջբերուած վկայութիւններից երեւում է, որ, իրօք, հայերի ձեռքին է կենտրոնացած եղել Օսմանեան Կայսրութեան ներքին առեւտրի յատկանշական չափաբաժինը: Տարանցիկ առեւտրից գանձուած մաքսերը, ըստ Մուրաջա դ'Օսսոնի, կազմում էին օսմանեան կառավարութեան եկամտի կարեւորագոյն յօդուածներից մէկը[33]: ԺԸ. դարավերջին Կ.Պոլսի հայերի կեանքում եւ Արեւմտեան Հայաստանում զգալի դեր էր խաղում հայկական առեւտրական բուրժուազիան՝ ի դէմս խոջաների, չելեբիների, ամիրաների[34]: 1790ականներին երեւելի էին գլխաւորապէս հայ, մանաւանդ՝ ակնցի սեղանաւորները, «*որոնց ձեռքն էին մեծ փոխատուութեանց փոխանակութեանց եւ դրամատունի բովանդակ գործողութիւնք, անշուշտ կային քանի մը մեծ հայ վաճառականներ ալ Կ.Պոլիսի ու գաւառներու շահաստանները, որ կը կատարէին երկիրին արտածութեանց եւ քիչ շատ ներածութեանց ալ վաճառականութիւնը...*»[35]: Խոջաները եւ չելեբիները, ովքեր տէր էին խոշոր դրամական միջոցների, ֆինանսաւորում էին սուլթանական արքունիքին, երբեմն էլ՝ նոյնիսկ սուլթանին[36]:

Այսպիսով, վերը շարադրուած տեղեկութիւնների համադրումից կարելի է եզրակացնել, որ Օլիւիէի այն տեղեկութիւնը, թէ հայերն են Օսմանեան Կայսրութեան մէջ, որ կատարում են ամենամեծ առեւտուրը եւ դա անում են խելամտօրէն՝ համապատասխանում էր իրականութեանը, այսինքն՝ կայսրութեան ասիական մասում իրականացուող առեւտրի մեծագոյն չափաբաժինը պատկանում էր հայերին:

ՊՈԼՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ

Արժէքաւոր է նաեւ Օլիւիէի տեղեկութիւնը Կ.Պոլսի բնակչութեան թուաքանակի մասին: Նա գրում է, որ «*այդ մեծ քաղաքի բնակիչները, դրա մէջ ներառելով նաեւ Բերա, Գալաթա, Սէն Դիմիտրի, Սկիւտար եւ Վոսփորի ափերին տեղադրուած շրջակայ գիւղերի բնակչութիւնը, կարող են լինել աւելի քան 500,000, ըստ ալիւրի այն քանակութեան, որ այնտեղ օրական*

սպառում է: Ճիշտ է նաեւ, որ հաշուի մէջ պէտք է մտցնել ալիւրի այն քանակութիւնը, որը գալիս է մաքսանենգ ճանապարհով՝ չնայած կառավարութեան հսկողութեանը: Բայց այդ փաստն այնքան էլ կարեւոր չէ, որ 20,000 բնակչի տարբերութիւն տայ»[37]:

Յայտնի է, որ Կ.Պոլսի հայ գաղթօջախը հարիւրամեակների պատմութիւն ունի: Կ.Պոլսում հայեր հաստատուել էին թուրքերի գրաւումից (1453) դեռեւս շատ դարեր առաջ եւ Թ.-ԺԱ. դդ. Կ.Պոլիսն արդէն վերածուել էր հայկական մարդաշատ գաղթօջախի[38]:

1478ի վիճակագրութեան համաձայն, թուրքերի գրաւումից 25 տարի յետոյ, Կ.Պոլսում կար 100,000-120,000 բնակիչ, ովքեր բնակւում էին 16,026 տներում եւ ըստ ազգութիւնների ունէին հետեւեալ պատկերը.- 9486 տուն մահմեդական, 3743 տուն յոյն, 1647 տուն հրեա, 817 տուն հայ, 267 տուն կաֆայեցի (սրանց մի մասը հայեր էին), 332 տուն եւրոպացի, 31 տուն գնչու[39]: Յետագայ դարերում հայերի թիւը զգալիօրէն աճեց՝ ի հետեւանք բռնագաղթերի եւ պանդխտութեան[40], նաեւ՝ քաղաքի առեւտրարհեստագործական հնարաւորութիւններին:

ԺԵ. դարի վերջերին Կ.Պոլսի հայ բնակչութեան թուաքանակն արդէն 1000 ծխի էր հասել[41]: ԺԷ. դարի ճանապարհորդ Սիմէոն Լեհացին, ով Կ.Պոլսում եղել էր 1608ին, գրում է. «*Եւ ասին թէ կայ ի Սպամպոլ ԽՌ (40000) Հրէի տուն եւ ԽՌ (40000) տուն Հռոմի, ԺՌ (10000) տուն Հայի, բայց Տաճկաց հաշիւ եւ համար չկայ»*[42]: Լեհացու այս հաղորդման մէջ թէեւ ճիշտ է բացատրւում Կ.Պոլսում հաւաքուած բնակչութեան՝ հայրենիքից տեղափոխուելու պատճառները, սակայն նրա կողմից բերուած թուերն ակնյայտօրէն չափազանցուած են[43]: ԺԸ. դարասկզբի Կ.Պոլսի բնակչութեան վերաբերեալ տեղեկութիւններ է հաղորդել 1715 Յունուարի 19ից մինչեւ 1716 Մայիսի 13ը Կ.Պոլսում մնացած վրաց նշանաւոր գրական-մշակութային ու քաղաքական գործիչ Սուլխան-Սաբա Օրբելիանին: Նա գրում է, որ Կ.Պոլսում, Ղալաթիայում, Պերայում եւ Սկիւտարում հարկատու են տասնհինգ տարեկանից մինչեւ վաթսուն տարեկանը.

յոյներ – 43 հազար հոգի,
հայեր – 17 հազար,
հրեաներ - 12 հազար,
ֆրանկներ – 2 հազար հոգի,

քրիստոնեայ հիւրեր – 4 հազար,
նաւերից գերեալներ եւ այլ – 2 հազար,
թաթարներ – 475 հազար,
ֆրանկներն ու թաթարները հարկ չեն վճարում[44]:

Այս տուեալներից Պաւէլ Չոբանեանը հետեւեցրել է, որ ֆրանկների եւ թաթարների քանակը լրիւ է արձանագրուած, իսկ հարկատու ժողովուրդների քանակն ընդգրկում է բնակչութեան միայն 15-60 տարեկան հասակը, եւ նրանց ընդհանուր թիւը շատ աւելի պէտք է լինէր (մօտաւորապէս՝ եռակի): Հետեւաբար, 1710ականներին Կ.Պոլսում եւ նրա արուարձաններում հայերի թիւը պէտք է լինէր աւելի քան 50 հազար հոգի կամ մօտ 9000 ծուխ[45]: Ըստ Կ.Պոլսում ֆրանսիական դեսպանութեան քարտուղար դը լա Կրուայի (ոմանց մօտ՝ Դելակրուա, դը լա Գռուա, F. G. de la Croix - Ա.Մ.) տեղեկութեան, ով Արեւելք էր ուղարկուել դեռեւս 1670ին եւ Կ.Պոլսում էր գտնուում 1676-1680ին[46], «*...հայերը հինգ եկեղեցի ունին Կ.Պոլսոյ մէջ, Ս. Գէորգ, Ս. Աստուածածին, Ս. Հրեշտակապետ, Ս. Լուսաւորիչ, Ս. Կարապետ, եւ թէ ըստ իրեն հաղորդուած հաշուոյն, այն ատեն Պոլսոյ մէջ 8000 Հայու տուն եւ 50,000 ոչ բնիկ Հայեր կային*»[47]: Օսմանեան տէրութեան մայրաքաղաքի բնակչութիւնը յետագայում, ինչ խօսք, աւելացել է՝ գլխաւորապէս արեւմտահայ գաւառներից եկած գաղթական վերաբնակիչների հաշուին: Ինճիճեանը Կ.Պոլսի ընդհանուր բնակչութեան թիւը նշում է մօտ մէկ միլիոն, այնուհետեւ գրում է, որ «*Պիշինկ զթիւ յունաց առաւել դնէ քան զ300 հազար ոգիս, եւ գրեթէ նոյնչափ է ասէ եւ թիւ հայոց*»[48]: Իսկ Յարութիւն Մրմրեանը գրում է, որ «*Հայոց թիւն ի Կ.Պոլիս ամէն ատեն հազիւ 150000ն անցած է ու այն՝ 19րդ դարին կէսերը*» եւ ապա ծանօթագրում, որ «*Ոմանք՝ մանաւանդ Հ. Ղուկաս Ինճիճեան՝ կը չափազանցեն այս թիւը կրկնապատիկ քանակով*»[49]:

ԺԸ. դարավերջին եւ ԺԹ. դարասկզբին Կ.Պոլսում եղած եւրոպացի որոշ ճանապարհորդներ, դիւանագիտական ներկայացուցիչներ թողել են Կ.Պոլսի բնակչութեան վերաբերեալ տուեալներ:

1784ին Լոնդոնում հրատարակուած Է. Էբասկիի (Habesci) աշխատութեան մէջ Կ.Պոլսի բնակչութեան թիւը (ներառեալ Գալաթա, Բերա, Սկիւտար արուարձանները) նշուած է 1,5 մլն.[50]: Իսկ Ջոն Պինկըրտընի տուեալներով՝ 18րդ դարավերջին Կ.Պոլսի

բնակչութիւնը 400,000 է՝ ներառեալ չորս արուարձանները՝ Գալաթա, Բերա, Թոփխանա, Սկիւտար: Այդ թուից 200,000ը թուրք են, 100,000ը՝ յոյն եւ մնացածը՝ հրեաներ, հայեր, ֆրանկներ[51]: 1801ին Լոնդոնում տպագրուած մի վիճակագրական հաշուետուութեան մէջ Կ.Պոլսի բնակչութեան թիւը 900,000 է նշուած[52], իսկ 1819ին Լոնդոնում տպագրուած միսիոնէրական մի վաւերագրում Պոլսի բնակչութեան թիւը տրուած է 400,000, որից 200,000ը՝ թուրքեր, 100,000ը՝ յոյներ, իսկ մնացածը՝ հրեաներ, հայեր, ֆրանկներ[53]: 1822ին Փարիզում տպագրուած մի գրքոյկում Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքի բնակչութեան թիւը, ներառեալ արուարձանները, հաշուուած է ամենաքիչը 600,000[54], իսկ անգլիացի ճանապարհորդ Ջ. Կարնիի մօտ բուն քաղաքի բնակչութիւնը 400,000 է նշուած, արուարձաններով՝ 800,000[55], ըստ Էյզենմանի Պոլիսն ունի 88,000 տուն եւ 600,000 բնակիչ[56]: Ա. Գասպարին Պոլսի բնակչութիւնը հաշւում է 500,000[57], Կ. Հոֆմանը համարում է 380,000, թէեւ նշում է, որ ոմանք հաշւում են 600,000[58]: Վ. Հոֆմանը 1848ին հրատարակած աշխարհագրական գրքոյկում նշում է 640,000 բնակիչ[59]: 1818-1821ին ճանապարհորդած Վէյանդը Պոլսի բնակչութեան թուաքանակը դնում է 400,000-500,000[60], Ու. Հանթըրը՝ 700,000, կէսը՝ թուրքեր, քառորդը՝ քրիստոնեաներ, մէկ-վեցերորդը՝ հրեաներ[61]:

Բաւարարուելով վերը բերուած տուեալներով՝ նշենք, որ ԺԸ. դարավերջին եւ ԺԹ. դարասկզբին Պոլսի բնակչութեան թուակազմի վերաբերեալ տուեալների մէջ բաւականին յաճախակի է հանդիպում 500,000 եւ 600,000 թիւը[62]: Բաւականին երկար ժամանակ Պոլսում ապրած եւ գործած նշանաւոր դ'Օսսոնը եւս նշում է, որ Պոլսի բնակչութիւնը 1790ականներին կազմել է մօտ 600,000 հոգի[63]: Ըստ Պոլսում երկար ժամանակ գտնուած (1812-1814, 1826) ֆրանսիացի կոմս Անդրէօսիի տուեալների՝ Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքի բնակչութիւնը կազմել է 630,000 հոգի[64]:

1765ի Պոլսի բնակչութեան թուաքանակի մասին մի հետաքրքիր տուեալ է բերում Ինճիճեանը. «*Ի ցուցակն Իսթանպուլ էֆէնտիսիին որ յամին 1765, թիւ տանց տաճկաց եւ քրիստոնէից միայն ի Ստանպօլ քաղաքի՝ դնի լինել 88185*»[65]: Այս տեղեկութիւնը հիմք ընդունելով՝ կարելի է ասել, որ եթէ միջնադարեան Ստամբուլի

բնակչութեան 60%ը մահմեդական էր[66], ապա 1765ի դրութեամբ Պոլսի քրիստոնեաների թիւը, ըստ տների կամ ծխերի, եղել է մօտ 35,000: Եւ քանի որ յոյների թիւը եղել է հայերից աւելի շատ, ապա Պոլսում հայոց տների թիւը մօտաւորապէս կազմել է 15,000-16,000: Եւ եթէ իւրաքանչիւր ծխում հաշուենք մօտ հինգ մարդ, ապա կարելի է ասել, որ 1765ին Պոլսի հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս եղել է 75,000-80,000: Ըստ Հ. Պէրպէրեանի՝ 1848ին Պոլսում հայերի թիւը 110,000 էր[67]:

Այսպիսով, ըստ Օլիւիէի տեղեկութեան, թէ Պոլսի բնակչութիւնն աւելին է եղել, քան 500,000ը, (իսկ տուեալ ժամանակաշրջանի եւ ԺԹ. դարասկզբի հեղինակների ճնշող մեծամասնութիւնը հաղորդում են 500,000ից մինչեւ 600,000 բնակչութիւն) եւ որ, ըստ Օլիւիէի, յոյները կազմել են ամբողջ բնակչութեան 1/6ը, այսինքն՝ մօտ 86,000-100,000 եւ եթէ հայերի թիւը յոյներից մի քիչ է պակաս, ապա հայերի թիւը մօտաւորապէս եղել է 70,000-80,000, առաւելագոյնը՝ 100,000:

Մենք, այնուամենայնիւ, կարծում ենք, որ Օլիւիէի տուեալներն անվերապահօրէն չպէտք է ընդունուեն, քանզի նրա բերած թուերը մօտաւոր են, եւ ինչպէս վերը յիշատակուած հեղինակները, այնպէս էլ Օլիւիէն, նշում են, որ «*որովհետեւ Թուրքիայում ընդհանրապէս չեն պահում ծննդեան եւ մահուան գրանցման մատեաններ, երբեք չի կարելի ճշգրիտ իմանալ Թուրքիայի քաղաքների բնակչութեան ճշգրիտ թիւը*»[68]: Վերոյիշեալ փաստի առթիւ Պէրպէրեանը գրում է. «*ո՛չ Օսմանեան Կայսրութեան եւ ո՛չ ալ Պոլսոյ բնակչութեան թիւին մասին հին վիճակագրութիւն գոյութիւն ունի: Հանազան հին աղբիւրներու մէջ յիշուած բոլոր թիւերն ալ առաւել կամ նուազ ենթադրական են: Նոյնիսկ ԺԹ. դարուն Պոլիս ապրած քանի մը Եւրոպացիներու կողմէ կատարուած հաշիւները՝ հիմնուած ալիւրի եւ միսի սպառումներուն հիման եւ ոչ թէ մարդահամարի վրայ*»[69]: Միւս կողմից էլ Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքի բնակչութեան թուակազմի տատանումները զգալիօրէն պայմանաւորուած էին ներքին եւ արտաքին բազմաթիւ գործօններով: Այսպէս, Արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներից Պոլիս գաղթած բազմաթիւ վերաբնակիչները յետագայում կա՛մ վերադառնում էին իրենց հայրենիքը, կա՛մ շարունակում իրենց ճանապարհը դէպի Եւրոպա: Պոլսի բնակչութեան եւ, մասնաւորապէս, հայերի աճը նոյնպէս տեղի էր

ունենում հիմնականում գաղթական բնակչութեան հաշուին, որն արդէն պայմանաւորուած էր թուրքական փաշայութիւններում քրիստոնեաների հալածանքների ուժեղացմամբ[70]:

Քիչ դեր չէին խաղում նաեւ քաղաքին պատուհասած աղէտները.[71] յատկապէս նշանաւոր էր Պոլսի 1778ի ժանտախտը, որի արդիւնքում «*միայն Պալաթու թաղին բնակիչներէն երեք ամսուան մէջ (Մայիսէն-Օգոստոս) 1000 Հայ զոհ գացած է ժանտախտին*»[72]: Աղէտալի հետեւանքներ է ունեցել նաեւ 1782 Օգոստոսի 10ի սոսկալի հրդեհը, որը «*66 ժամ տեւեց, մոխիր դարձուց Պոլսոյ մէջ հազարաւոր տուներ, հազարէ աւելի մարդոց կիզման պատճառ ըլլալով. այրեցաւ Ս. Գէորգ եկեղեցին ալ, ինչպէս 6 յոյն եկեղեցի*»[73]:

Այսպիսով, հաւանական ենք համարում, որ ԺԸ. դարավերջին Պոլսում հայ ազգաբնակչութեան թիւը եղած լինի քիչ աւելի, քան Օլիւիէի տուեալների հիման վրայ հաշուարկած 70,000-80,000ը, բայց ոչ աւելի, քան 100,000ը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] М.С. Мейер, Османская империя в XVIII веке (Օսմանեան Կայսրութիւնը ԺԸ. Դարում), Մոսկուա, Նաուկա հրատ., 1991, էջ 33 :

[2] Նոյն, էջ 37:

[3] М.С. Мейер, "К характеристике экономической жизни городов Османской империи в XVIII веке," - *Проблемы генезиса капитализма. Сборник статей*, (XVIII դարում Օսմանեան Կայսրութեան քաղաքների տնտեսական կեանքի բնութագրման շուրջ – դրամատիրութեան ծագման հիմնախնդիրներ. յօդուածների ժողովածու), Մոսկուա, Նաուկա Հրատ., 1978, էջ 245:

[4] Նոյն, էջ 260:

[5] Օլիւիէն այս բառը ծանօթագրում է հետեւեալ կերպ. «Սա մի անուն է, որով կոչում են բոլոր եւրոպացիներին»: Ինչպէս յայտնի է, այս եզրը օգտագործւում է նաեւ հայագիտութեան մէջ՝ ե՛ւ եւրոպացի, ե՛ւ կաթոլիկ իմաստներով:

[6] G.-A. Olivier, *Voyage dans l'Empire Othoman, l'Égypte et la Perse, Fait par ordre du Gouvernement, pendant les six premières années de la République*, chez H. Agasse, Imprimeur-Libraire, Paris, 1801, tome premier, Paris, 1801, էջ 24-25:

[7] Olivier, *Voyage*, t. 1, էջ 28-29 :

[8] А.А. Аджян, М.К. Зулалян, "Ремесленное производство в Стамбуле в первой половине XVII века," (Անտոն Հաճեան, Մանուէլ Զուլալեան, Արհեստագործական արտադրութիւնը Ստամբուլում XVII դարի առաջին կէսին), *Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ, X, Թուրքիա*, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1979, էջ 178:

[9] Մ. Կ. Զուլալեան, *Արեւմտեան Հայաստանը XVI-XVIII դդ.*, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1980, էջ 313:

[10] Նոյն, էջ 243:

[11] Հ. Ղազարեան, *Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական եւ Քաղաքական Կացութիւնը 1800-1870 թթ.*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 141:

[12] Մէջբերումն ըստ՝ Մ. Վարանդեան, *Հայկական Շարժման Նախապատմութիւն, Հտր. 1*, Հրատ. Հ. Յ. Դ., Ժընեւ, 1912, էջ 102, 109:

[13] Նոյն, էջ 102-103:

[14] Շահի կամ շահոյթ ստանալու համար կատարուող զանազան կարգի մեքենայութիւնների վրայ հիմնուած գործողութիւն կամ գործարք:

[15] Olivier, Voyage, t. 1, էջ 92:

[16] Olivier, Voyage, t. 1, էջ 27. Կարծում ենք, որ Օլիվիէն իր այս տեղեկութեան մէջ տուրք է տուել ազգային սնապարծութեանը:

[17] Reclus Elisée, *Nouvelle Géographie Universelle La Terre et les Homme, Tome IX, L'Asie Antérieure*, Paris, 1884, էջ 341 :

[18] И.И. Голобородько, *Старая и новая Турция*, (Ի. Գոլոբորոդկо, Հին եւ նոր Թուրքիան), Մոսկուա, 1908, էջ 221: Հմմտ.՝ Հ. Ղազարեան, *Արեւմտահայերի*, էջ 142:

[19] К. Маркс, Ф. Энгельс, *Сочинения*, Изд. второе, (Կ. Մարկս եւ Ֆ. Էնգելս, երկեր, Բ. Տիպ.), Հտր. 9, Քաղաքական գրականութեան պետական Հրատ., Մոսկուա, 1957, էջ 25:

[20] Ղ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա.*, Ի վանս սրբյն Ղազարու, Վենետիկ, 1806, էջ 47:

[21] Tournefort, *Relation d'un Voyage du Levant, t. II,* էջ 389, հմմտ. Մ. Վարանդեան, *Հայկական Շարժման Նախապատմութիւն, Հտր. 1*, էջ 140-141:

[22] Villette, *Voyage d'un Missionaire en Turquie, en Arménie*, էջ 531, հմմտ. Վարանդեան, *Հտր. 1*, էջ 142:

[23] Խ. Դադայեան, *Ակնարկներ Հայ Վաճառականութեան Պատմութեան*, Հայրենիք Ակումբի Հրատ., Երեւան, 2009, էջ 26:

[24] Նոյն, էջ 45:

[25] L.-F. Ferrières-Sauvebœuf, *Mémoires Historiques, Politiques et Géographiques des Voyages du Comte de Ferrières-Sauvebœuf, Fait en Turquie, en Perse et en Arabie; Depuis 1782 Jusqu'en 1789, T. 1*, Maastricht, 1790, էջ 206 :

[26] Յ. Յակոբեան, *Ուղեգրութիւններ. Աղբիւրներ Հայաստանի եւ Անդրկովկասի Պատմութեան, Ուղեգրութիւններ, ԺԹ. Դարի Առաջին Քսանամեակ (1800-1820),* Հրտ. Մելգոնեան Ֆոնդի, Երեւան, 1934, Հտր. Զ, էջ 203:

[27] C. Ritter, *Die Erdkunde im Verhältnib zur Natur und zur Geschichte des Menschen Allgemeine Vergleichende Geographie als Sichlere Grundlage des Studiums und Unterrichts in Physichalischen und Historischen Wissenschalten von Carl Ritter, Band I, Th. 2*, Berlin, 1832, էջ 177, հմմտ. Վարանդեան, *Հտր. 1*, էջ 143:

[28] Ղ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն, Մասն Ա., Հտր. Ա.*, էջ 49:

[29] Յ. Գ. Մրմըրեան, «Հայք ի Կ.Պոլիս, Պոլսահայ գաղութին պատմութիւնը 5-րդ դարէն 20-րդ դար», *Վերջին Լուր*, N 2187, 27 Մայիս, Կ.Պոլիս, 1921:

[30] Д.Е. Еремеев, “Национальные процессы в странах Ближнего и Среднего Востока,” *Турция* (Դ. Երեմէեւ, Ազգայնականութեան գործընթացը. ազգային գործընթացները Արեւելքում Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներում, *Թուրքիա*), Մոսկուա, 1970, էջ 49, հմմտ. Անահիտ Աստոյեան, *Դարի Կողոպուտը. Հայերի Ունեզրկումը Օսմանեան Կայսրութիւնում*, Նայիրի Հրատ., Երեւան, 2013, էջ 15-16:

[31] Еремеев, էջ 22:

[32] *Հայ Գաղթաշխարհի Պատմութիւն (Միջնադարից Մինչեւ 1920 թ.), Հտր. 2*, Գիտութիւն Հրատ., Երեւան, 2003, էջ 123. նաեւ՝ Աստոյեան, էջ 16:

[33] Մ. Կ. Զուլալեան, *Արեւմտեան Հայաստանը XVI-XVIII դդ.*, Երեւան, 1980, էջ 240:

[34] *Հայ Գաղթաշխարհի, Հտր. 2*, էջ 85-87. նաեւ՝ Ա. Ա. Խառատեան, *Կոստանդնուպոլսի Հայ Գաղթօջախը (XV – XVII դդ.)*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2007, էջ 272-294. նաեւ՝ Վ. Համազասպեան, *Էջեր Հայ Գաղթավայրերի Պատմութիւնից* (Կազմ.՝ Ա. Անդրանիկեան, խմբ.՝ Մ. Երամեան), Մուղնի Հրատ., Երեւան, 2015, էջ 44-47. նաեւ՝ Խ. Դադայեան, *Հայոց Առեւտրատնտեսական Գործունէութիւնը Ներկայիս Թուրքիայի Տարածքում. XV դ.– 1915 թ.: Փաստերի Ժողովածու*, Երեւան, Գասպրինտ Հրատ., 2012, էջ 9, 12. նաեւ՝ Խ. Դադայեան, *Հայ Վաճառականի Արահետներով*, Երեւան, ԱՀԱ Պոլիգրաֆ Հրատ., 2013, էջ 18-19:

[35] Յ. Գ. Մրմըրեան, *Թուրքահայոց Հին Վաճառականութիւնն եւ Վաճառականք (1740-1890)*, Տպագրութիւն Սագայեան, Կ.Պոլիս, 1908, էջ 14:

[36] Аджян, Зулалян, էջ 179 :

[37] Olivier, Voyage, t. 1, էջ 30, 31-32:

[38] Տե՛ս Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսէրեան, «Կ.Պոլսոյ Հայ Գաղութին Ծագումը Եւ Հնագոյն Եկեղեցիներ», *Ընդարձակ Տարեցոյց Սբ Փրկչեան Ազգային Հիւանդանոցի*, Նոր շրջան, Բ. Տարի, Կ.Պոլիս, 1926, էջ 291 . նաեւ՝ Յ. Ճ. Սիրունի, *Պոլիս Եւ Իր Դերը, Առաջին Հատոր (1453-1800)*, Տպ. Մեսրոպ, Պէյրութ, 1965, էջ 79. նաեւ՝ Ա. Գ. Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան, Հտր. Ա.*, Հայպետհրատ, Երեւան, 1964, էջ 55. նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայ Գաղթականութեան Պատմութիւն*, Զանգակ-97, Երեւան, 2002, էջ 585. նաեւ՝ *Հայ Գաղթաշխարհի, Հտր. 2*, էջ 65-67. նաեւ՝ Խառատեան, *Կոստանդնուպոլսի*, էջ 49-87. նաեւ՝ Դադայեան, *Հայոց Առեւտրատնտեսական Գործունէութիւնը Ներկայիս*, էջ 7, Համազասպեան, էջ 31-36. նաեւ՝ Խաչիկ Դադայեան, *Հայոց Տնտեսական Յեղասպանութիւն: Հայերի Տնտեսական Գործունէութիւնը Ներկայիս Թուրքիայի Տարածքում Մինչեւ 1915 Թուականը: Փաստաթղթերի Ժողովածու*, Երեւան, Էդիթ Պրինտ հրատ., 2016, էջ 19:

[39] Հ. Պէրպէրեան, «Իսթանպուլի Հայ Բնակչութիւնը Քաղաքին Գրաւումէն Մինչեւ Ֆաթիհ Մեհմէտ Բ.ի Մահը», *Հանդէս Ամսօրեայ*, 1962, թիւ 9-12, էջ 422, նոյնի՝ *Նիւթեր Կ.Պոլսոյ Հայոց Պատմութեան Համար*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1965, էջ 52. նաեւ՝ Խաչատուր Դադայեան, *Հայոց Տնտեսական Յեղասպանութիւն: Հայերի Տնտեսական Գործունէութիւնը Նրկայիս Թուրքիայի Տարածքում Մինչեւ 1915 Թուականը: Փաստերի Ժողովածու*, Երեւան, Էդիթ Պրինտ, 2016, էջ 21-22:

[40] Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Հայերու Յրուումը Աշխարհի Զանազան Մասերը, Հտր. Գ., (Նոր Դարու Սկիզբէն Մինչեւ Ի. Դարու Սկիզբը), Ա. Մաս, Արեւելեան Գաղութներ*, Տպ.Նոր Աստղ, Գահիրէ, 1961, էջ 256. նաեւ՝ J. de Hammer, *Histoire de l'Empire Ottomane depuis son Origine Jusqu'a nos Jours, T. IV*, Paris, M.DCCC.XXXVI. (1836), էջ 203. նաեւ՝ Մ. Չամչեանց, *Հայոց Պատմութիւն (Սկզբից Մինչեւ 1784 Թուականը), Հատոր Գ.*, ԵՊՀ Հրատ., Երեւան, 1984, էջ 529, 689-690. նաեւ՝ Հ. Պէրպէրեան, «Դրուագներ ԺԷ. Դարու Թրքահայոց Պատմութենէն, 1609 եւ 1634-ի Բոնի Ներգաղթները», *Պայքար*, 6-25 Փետրուար, Բոստոն, 1948:

[41] Պէրպէրեան, «Իսթանպուլի Հայ Բնակչութիւնը Քաղաքին», էջ 422. նաեւ՝ Պէրպէրեան, *Նիւթեր Կ.Պոլսոյ*, էջ 52:

[42] *Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք*, Ուսումն. եւ հրատ.՝ Հ. Ներսէս Վրդ. Ակինեան, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1936, էջ 26:

[43] Պ. Ա. Չոբանեան, *Վրացական Ուղեգրութիւնները եւ Նրանց Տեղեկութիւնները Հայերի Մասին*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1981, էջ 30:

[44] Նոյն, էջ 28-29:

[45] Նոյն, էջ 29:

[46] Մ. Կ. Զուլալեան, *Հայ Ժողովրդի XIII-XVIII Դարերի Պատմութեան Հարցերը Ըստ Եւրոպացի Հեղինակների, Գիրք Ա., Քաղաքական Պատմութիւն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1990, էջ 42:

[47] Մէջբերումն ըստ՝ Հրանդ Ասատուր, «Կ.Պոլսոյ Հայերը Ու Իրենց Պատրիարքները», *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի*, Կ.Պոլիս, 1901, էջ 111. հմմտ.՝ Սիրունի, *Պոլիս, Հտր. 1*, էջ 354. նաեւ՝ Չոբանեան, *Վրացական*, էջ 30. նաեւ՝ Համազասպեան, *Էջեր Հայ Գաղթավայրերի Պատմութիւնից*, Երեւան, Մուղնի Հրատ., 2015, էջ 43:

[48] Ղ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն, Մասն Երկրորդ, Եւրոպիա, Հատոր Ե.*, Վենետիկ, 1804, էջ 115:

[49] Յ. Գ. Մրմըրեան, *Մասնական Պատմութիւն Հայ Մեծատուններու (1400-էն 1900)*, Բ. Տիպ., Կ.Պոլիս, 1910, էջ 49:

[50] E. Habesci, *The Present State of the Ottoman Empire*, London, 1784, էջ 354. նաեւ՝ E. Abesci, *État Actuel de l'empire Ottoman, t. 2*, Paris, 1792, էջ 154. նաեւ՝ Н.В. Миховъ, *Населението на Турция и България прѣзъ в., томъ втори, Държавна печатница* (Ն. Միխով, Թուրքիայի եւ Բուլղարիայի բնակչութիւնը *XVIII-XIX դդ.*) Սոֆիա, Պետական տպարան, 1924, էջ 1:

[51] J. Pinkerton, *Modern Geography*, London, 1802, v. 2, էջ 456. նաեւ՝ Миховъ, Հտր. 3, Սոֆիա, 1929, էջ 333:

[52] *The Statistical Breviary; shewing on a priniciple entirely new, the Resources of every State and Kingdom in Europe...* , London, 1801, էջ 21. նաեւ՝ Миховъ Հտր. 3, էջ 337:

[53] Black Sea. Church Missionary Society. = The Missionary Register for 1819, London, 1819, էջ 14. նաեւ՝ Mikhon, т. 4, Sofia, 1935, էջ 41:

[54] Capitale. La capitale de l'Empire Ottoman, Paris, 1822, էջ 13. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 72 :

[55] J. Carne, *Reise im Orient*, Jena, 1827, էջ 18. նաեւ՝ Mikhon, т. 2, էջ 72-73:

[56] J. A. Eisenmann, *Nueste, allgemeine Erdbeschreibung*, München, 1813, էջ 250. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 91:

[57] A. C. Gaspari, *Lehrbuch der Erdbeschreibung zur Erläuterung sowohl des neuen methodischen Schulatlasses*, Weimar, 1819, I Abth., էջ 527. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 110:

[58] K. Hoffman, *Die Erde unde ihre Bewohner*, Wien, 1833, էջ 332. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 133:

[59] W. Hoffman, *Handbuch der Geographie. Leipzig und Wien*, 1849, էջ 305. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 134:

[60] J. C. Weyand, *Reisen durch einen Theil von Europa, Asien und Afrika in den Jahren 1818 bis 1821*, Wien, 1828, էջ 11. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, էջ 297:

[61] W. Hunter, *Reisen durch Frankreich, die Türkei und Ungarn bis Wien*, Leipzig, (1797), էջ 119. նաեւ՝ Миховъ, Հտր. 2, с. 138.

[62] Миховъ, Հտր. 2, էջ 76, 118-119, 123, 175, 185, 228-229; т. 3, էջ 20, 82, 135, 181, 257, 332, 338; т. 4, էջ 309; т. 5, Sofia, 1968, էջ 57:

[63] M. D'Ohsson, *Tableau général de l'Empire Othoman, t. VII*, Paris, M.DCCC.XXIV. (1824), էջ 297:

[64] M. le comte Andreossy, *Constantinople et le Bosphore de Thrace, pendant les années 1812, 1813 et 1814, et pendant l'année 1826*, Paris, M.DCCC.XXVIII. (1828), էջ 426 :

[65] Ինճիճեան, *Աշխարհագրութիւն, Մասն Բ., Հտր. Ե.*, Վենետիկ, Ս. Ղազար, 1802, էջ 115:

[66] Ю. А. Петросян, А.Р. Юсупов, *Город на Двух Континентах* (Եու. Պետրոսեան, Ա. Եուսուփով, Երկու աշխարհամասերում գտնուող քաղաքը), Մոսկուա, Նաուկա Հրատ., 1977, էջ 110 :

[67] Հ. Պէրպէրեան, «Դրուագներ ԺԷ. Դարու Թրքահայոց», *Պայքար*, 21 Փետրուար, 1948:

[68] G.- A. Olivier, *Voyage*, t. 1, p. 30.

[69] Պէրպէրեան, «Դրուագներ ԺԷ. Դարու Թրքահայոց»:

[70] Չոբանեան, էջ 30:

[71] Ա. Պէրպէրեան, *Պատմութիւն Հայոց, Սկսեալ Ի 1772 Ամէ Փրկչին Մինչեւ Յամն 1860, Հանդերձ Կարեւոր Տեղեկութեամբ Եւ Ժամանակագրութեամբ Երեւելի Իրաց*, Տպ. Պօղոս Քիրիշչեանի, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 437, 438, 440, 441, 442 եւն.:

[72] Հրանդ Ասատուր, «Կ.Պոլսոյ Հայերը Ու Իրենց Պատրիարքները», *Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի*, Կ.Պոլիս, 1901, էջ 153, Պէրպէրեան, *Պատմութիւն Հայոց*, էջ 436:

[73] Ասատուր, «Կ.Պոլսոյ Հայերը Ու Իրենց», էջ 155-156, նոյնի՝ *Կ.Պոլսոյ Հայերը Եւ Իրենց Պատրիարքները*, Տպ. Պայքար, Ուոթրթաուն, 1973, էջ 85-86:

THE ROLE OF ARMENIANS IN OTTOMAN TRADE AND THE NUMBER OF THE ARMENIANS IN CONSTANTINIOPLE (1780-1820S)

(Summary)

ARMAN MALOYAN
armanmaloyan@mail.ru

In the second half of the 18th century a considerable number of urban Western Armenianu lived in Constantinople, the capital of the Ottoman Empire, which had a mixture of Armenians from different provinces of Western Armenia. As Constantinople was the main sociopolitical centre of Western Armenians, it is important to study the demography of its Armenian community; in addition, the second half of the 18th century has been relatively little studied. The sustainability and vitality of the Armenian community of Constantinople greatly depended upon the continuous inflow of Armenians from the provinces. Owing to this fact the town maintained its role as the political, spiritual and cultural-educational centre of Western Armenians.

Basing his conclusion on a comparative study of data provided by Armenian and foreign authors, the author states that the information provided by the French traveller G.-A. Olivier, who rated the Constantinople Armenians as the main and most knowledgeable traders in the Ottoman Empire, must be true. This means that Armenians had the largest market share of the Ottoman Empire's domestic trade.

On the other hand, the author disagrees and has reservations when Olivier puts the number of Constantinople Armenians at around 7-8000. The author argues that in the 1790s the number should be closer to 10,000 but not more than that. The author notes that the fluctuation of the number of Armenians in Constantinople was due to domestic and foreign factors. For instance a number of those who came from the provinces returned to their birthplaces at a later stage or continued on to Europe. The increase of the number of Armenians in Constantinople was at the expense of their number in the provinces. Armenians fled the provinces because of the increasing persecution against Christians.